ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/74

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝

Մասնակցությամբ՝

«Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա.Պարանյանի (լիազորագիր տրված՝ 26.03.2021թ.),

ՀՀ սոցիալական ապահովության ծառայության ներկայացուցիչ՝ Գ. Ջանջուղազյանի (լիազորագիր տրված՝ 05.04.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.03.2021թ. թիվ 26/26-1/4042-2021 գրությամբ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ սոցիալական ապահովության ծառայության՝ 12.03.2021թ. թիվ 02/14-5/7197-2021 գրության հիման վրա, 19.03.2021թ. թիվ 26/26-1/4042-2021 գրությամբ նախաձեռնել է «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 05.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է հետևյալը.

««Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կողմից կազմակերպված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով ընթացակարգին, հայտի փաթեթում բացակայել է հայտի ապահովումը և գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է և «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ին առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը: Այնուհետև «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն նշված ժամկետում չի հասցրել վերցնել հայտի ապահովումը և գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվել է: Միևնույն ժամանակ ցանկանում եմ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ ուրբաթ օրը, հարցում է պատրաստվել «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին, որով խնդրել ենք հայտնել թե ինչու է հայտի ապահովման սպասարկումն ուշացել և դեռևս պատասխան չունենք, իմ կարծիքով սույն պատասխանը կարող է էական նշանակություն ունենալ ընթացակարգի վերաբերյալ կայացվելիք որոշման ելքի: Խնդիրը կապված է եղել բանկի կողմից հայտի ապահովումը ուշ տրամադրելու հետ: Հուսով ենք պատասխանը բանկի կողմից կստանանք սեղմ ժամկետում, նմանատիպ հարցումների պատասխանները ստացել ենք 2 աշխատանքային օր անց»:

Այնուհետև՝ 06.04.2021թ., ներկայացված դիրքորոշմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

««Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Սոցիալիական ապահովության ծառայության կողմից հայտարարված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը բացառությամբ հայտով չի ներկայացվել հայտի ապահովումը:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը և մասնակցին ծանուցել արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով որոշել է՝ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ մասնակցի կողմից ներկայացրած հայտը հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխանության հիմքով:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Հայտնում ենք, որ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է Սոցիալական ապահովության ծառայության կողմից հայտարարված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, սակայն հայտում արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ հայտով չի ներկայացվել հայտի ապահովումը:

Նույն արձանագրությամբ որոշում է կայացվել՝ կասեցնել նիստը և մասնակցին ծանուցել արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար, իսկ արդեն 05.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով որոշվել է՝ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք.

Չնայած այն հանգամանքին, որ մինչ հայտ ներկայացնելու վերջնաժամկետն ընկած հատվածում ՍՊԸ-ն արդեն դիմել էր սպասարկող բանկին հայտի ապահովման նպատակով ներկայացվելիք բանկային երաշխիքը ստանալու համար, այնուհանդերձ՝ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցումը ստանալուց անմիջապես հետո ՍՊԸ-ն նորից դիմել է սպասարկող բանկին համապատասխան հայտի ապահովումը ստանալու համար:

Այն փաստը, որ բանկային երաշխիքի տրամադրումը երկարաձգվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից գնահատման ընթացքը ձգձգվելու արդյունքում՝ ՍՊԸ-ի կողմից կատարվել է համապատասխան հարցում, մասնավորապես հետևյալ բովանդակությամբ՝

Հայտնի է որ ՀՀ-ում պետական գնումների շրջանակներում ներկայացվում են հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքի տեսքով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հայտնել, թե բանկային երաշխիք ստանալու նպատակով ներկայացվող դիմումից հետո «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից ինչ ժամկետում է ընդունվում որոշում բանկային երաշխիք տրամադրելու /չտրամադրելու/ վերաբերյալ, և դրական որոշման դեպքում քանի օրում է տրամադրվում բանկային ևրաշխիքը:

Հայտնում ենք, որ վերը նշված հարցման պատասխանը դեռևս չենք ստացել և գտնում ենք, որ պատասխանը էական նշանակություն է ունենալու սույն ընթացակարգի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար, ուստի խնդրում ենք հաջորդ նիստը նշանակել այն ժամկետում, որ հնարավոր լինի ստանալ հարցման վերաբերյալ պատասխանը:

Վերը նշված փաստերը վկայում են, որ հայտի ապահովման նպատակով «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիք չներկայացնելը ամբողջությամբ կապված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գործողությունների հետ, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում ՍՊԸ-ին չպետք է վերագրվի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում:

Վերոհիշյալի արդյունքում Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը իր հերթին հանգեցրել է «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ

խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

3. <u>ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.03.2020թ. թիվ 02/14-5/7197-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի փետրվարի 23-ին Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել թվով մեկ կազմակերպություն՝ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն: Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության ներկայացրած հայտում:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 3-ի որոշմամբ հանձնաժողովի նիստը կասեցվել է և հրավերով սահմանված կարգով մասնակցին ժամանակ է տրվել անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն Ընկերությունը արձանագրված անհամապատասխանությունը չի շտկել:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 5-ի նիստի որոշմամբ մերժվել է «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի հայտը ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11 ծածկագրով հրավերի 8.10 կետով սահմանված պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 05.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/74 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/74 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ չի ներկայացվել հայտի ապահովումը, իսկ հայտի ապահովման փոխարեն armeps համակարգում ներբեռնված է հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 03.03.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ՝ սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ, այն է՝ հայտով ներկայացված չէ հրավերի 1-ին մասի 4.3 կետով և 7-րդ բաժնով սահմանված հայտի ապահովումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 19.03.2021թ. թիվ 26/26-1/4042-2021

գրությունը, ՀՀ սոցիալական ապահովության ծառայության՝ 12.03.2021թ. թիվ 02/14-5/7197-2021 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***<u>խախտել է</u>*** պայմանագրով նախատեսված կամ ***<u>գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է</u>*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***<u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում,</u> որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ

կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:*** Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝*** հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության

հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ չի ներկայացվել հայտի ապահովումը, իսկ հայտի ապահովման փոխարեն armeps համակարգում ներբեռնված է հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը, շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 03.03.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ՝ սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ, այն է՝ հայտով ներկայացված չէ հրավերի 1-ին մասի 4.3 կետով և 7-րդ բաժնով սահմանված հայտի ապահովումը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, ոչ միայն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ի սկզբանե հայտ ներկայացնելիս հայտին կից չի ներկայացրել հրավերով սահմանված հայտի ապահովումը, այլ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունն արձանագրելուց, Կարգի 41-րդ կետի համաձայն, նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելուց և անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալուց հետո ևս սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովումը, այսինքն՝ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար՝ գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում անդրադառնալ հետևյալին.

Ընկերության կողմից ներկայացվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին կատարված հարցումը հետևյալ բովանդակությամբ.

«Հայտնի է որ ՀՀ-ում պետական գնումների շրջանակներում ներկայացվում են հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքի տեսքով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հայտնել, թե բանկային երաշխիք ստանալու նպատակով ներկայացվող դիմումից հետո «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից ինչ ժամկետում է ընդունվում որոշում բանկային երաշխիք տրամադրելու /չտրամադրելու/ վերաբերյալ, և դրական որոշման դեպքում քանի օրում է տրամադրվում բանկային երաշխիքը»:

Այնուհետև՝ 08.04.2021թ. ներկայացվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված պատասխան գրությունը հետևյալ բովանդակությամբ.

«Բանկի կողմից Բանկային երաշխիքի դիմումը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը բանկ ներկայացվելուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

Դիմումը հաստատվելու պարագայում Բանկային երաշխիքը հաճախորդին տրամադրվում է բանկի որոշմամբ նախատեսված ապահովման պայմանագրերը կնքված լինելու դեպքում: Ընդ որում գույքի գրավադրման դեպքում բանկային երաշխիքը հաճախորդին տրամադրվում է գրավի պայմանագրերը բանկի համար ընդունելի ձևով ձևակերպելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելուց, գրավի առարկաները բանկի պահանջով վերջինիս հետ համագործակցող ապահովագրական ընկերության

միջոցով ապահովագրելուց, ինչպես նաև բանկային երաշխիքի տրամադրման այլ պայմանները հաճախորդի կողմից կատարվելուց հետո...»:

Այսպիսով՝ վերոգրյալի կապակցությամբ ևս մեկ անգամ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ***<u>հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:</u>***

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:</u>***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը</u>***:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>:

Այսինքն՝ վերը շարադրված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով հայտին կից ներկայացնել հայտի ապահովումը, իսկ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացնի մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, այնուամենայնիվ, հայտով չներկայացնելու դեպքում, օրենսդիրը նախատեսել է, Կարգի

41-րդ կետի համաձայն, ***մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնելու և մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն՝ միևնույն ժամանակ սահմանելով իմպերատիվ պահանջ՝ սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, այսինքն՝ Ընկերությունը թեև կրում էր պարտավորություն հայտի ապահովման համար բանկ դիմելու մինչև հայտը ներկայացնելը և հայտ ներկայացնելիս ներկայացնել նաև հայտի ապահովումը, խախտել է նշված պահանջը, շտկման հնարավորություն ստանալուց հետո է միայն դիմել բանկ և մեկ աշխատանքային օրվա ընթացքում չստանալով հայտի ապահովումը՝ չի օգտվել իրեն ընձեռնված շտկում կատարելու հնարավորությունից, այսինքն՝ հարցման պատասխանն այն մասին թե ի՞նչ ժամկետում է տրամադրվում հայտի ապահովումը, չի կարող ազդել գործի քննության արդյունքներով կայացված որոշման վրա, քանի որ ինչպես արդեն նշվեց, երաշխիքը ստանալու գործընթացը մասնակիցը կարող էր նախաձեռներ մինչև հայտ ներկայացնելը, ոչ թե հայտ ներկայացնելուց հետո միայն:***

Միևնույն ժամանակ, հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենսդիրը որպես հայտի ապահովման միջոց սահմանել է նաև կանխիկ փողը և Ընկերությունը զրկված չի եղել, այդ տարբերակով ևս հայտի ապահովում ներկայացնելու իր իրավունքը իրացնելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 19.03.2021թ. թիվ 26/26-1/4042-2021 գրությամբ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**